ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 փետրվարի 2023 թվականի N 179-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով՝

«6) Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թռիչքային գործունեության, թռիչքային պիտանիության, օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման, ավիացիոն անվտանգության, ավիացիոն մասնագետների սերտիֆիկացման, թռիչքային անվտանգության ապահովման և որակի կառավարման ստորաբաժանումների քաղաքացիական աշխատանք կատարող

անձանց հավելավճարների վճարման պայմանները, դեպքերը, կարգը և չափերը՝ համաձայն N 6 հավելվածի։».

2) որոշման N 1 հավելվածի «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ, ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ, ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԱՎԻԱՑԻՈՆ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ, ԹՌԻՉՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐ		
10.	պետ՝ վարչության	6.45
11.	պետ՝ բաժնի	6.05
12.	տեղակալ՝ վարչության պետի	6.15
13.	գլխավոր մասնագետ-տեսուչ	5.1
14.	գլխավոր մասնագետ	3.95
14.1.	առաջատար մասնագետ	3.21

».

3) որոշումը լրացնել նոր՝ N 6 հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Սահմանել, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման, ավիացիոն անվտանգության կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոններն անվանացանկից հանելու և դրանք քաղաքացիական աշխատանք կատարողների պաշտոններ նախատեսելու, քաղաքացիական ծառայողներին համապատասխան քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոնում նշանակելու դեպքում (օրինակ՝ վարչության պետի պաշտոնից ազատելու և վարչության պետի պաշտոնում նշանակելու դեպքում) նրանց՝ քաղաքացիական ծառայողի վերջին պաշտոնի պաշտոնային դրույքաչափը պահպանվում է, եթե սույն որոշմամբ

համապատասխան պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի որոշման գործակիցը ցածր է քաղաքացիական ծառայության այդ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի որոշման գործակցից: Այս դեպքում տվյալ աշխատողի պաշտոնային դրույքաչափը պահպանվում է մինչև այն պահը, երբ սույն որոշմամբ սահմանված կարգով որոշված պաշտոնային դրույքաչափն ավելի բարձր կլինի սույն կետի համաձայն պահպանված պաշտոնային դրույքաչափից:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտը:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թռիչքային գործունեության, թռիչքային պիտանիության, օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման, ավիացիոն անվտանգության, ավիացիոն մասնագետների սերտիֆիկացման, թռիչքային անվտանգության ապահովման և որակի կառավարման ստորաբաժանումների քաղաքացիական աշխատանք կատարող անձանց պաշտոնների նկարագրերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ